

Համար շատ մը հատորներ կը հայթայթէ ՏՆԱՆ-
ԿԱՑ ՍԵՆԵԱԿԸ:

Տնակ-ից տէնէ-կին մէջ հազարաւոր հատոր-
ներ կային որոնք, սակայն, պլլելալլ Ընկերու-
թիւններու խնամքին առարկայ եղած են, չենք
գիտեր ինչչափ գիտակցութեամբ. որովհետեւ
ականատեսներ կը վկայեն թէ այն գրքերուն շա-
տերը (տպագիրներ) գործածուած են Մայր-Վար-
ժարանի մրցանակաբաշխութեան հանդէսները
փառաւորելու եւ վարժարանին ուսանողները հըր-
ձուեցընելու համար: Այն միջոցներուն է որ բա-
րեբախտաբար կը հաստատուի Ազգ. Մատենա-
դարանը եւ Տնանկաց Սենեակին մէջ բանտար-
կուած գրքեր կը փոխադրուին հոն:

Փոխադրուած գրքերուն մէջ միայն 360 կտոր
ձեռագիրներ կը յիշուին, այսինքն՝ Ազգ. Մատե-
նադարանի ձեռագիրներու բաժնին գրեթէ հիմա-
կուան ամբողջը: Այս ձեռագիրներուն վիճակէն
գտատելով՝ կրնանք ըսել թէ Կոլոտի Մատենադա-
րանին միայն ձեռագրաց բաժինը մեծ եւ անդար-
մանելի կորուստներ ունեցած է: — Վասն զի Ազգ.
Մատենադարանի ձեռագիրներէն մէկուն վըայ կը
կարդացուի 601 թիւը, որ ըստ մեզ ցոյց կու տայ
Կոլոտի Մատենադարանին ձեռագիրներուն թուա-
համարը, եւ որ հաւանաբար ունեցած է իր շարու-
նակութիւնը, ո՞ր գիտէ, թերեւս մինչեւ հազա-
րաւոր թիւեր... ձեռագիրներու:

Տարակոյս չկայ որ Ազգ. Մատենադարանի
հաստատութեամբ փրկուեցաւ Կոլոտի Մատենա-
դարանին նշխարքը: Առանց Ազգ. Մատենադա-

Յաւալի է ըսել թէ Ազգ. Մատենադարանի Թանգարանը
(musée) գոյութիւն չունի հիմայ՝ իբր հետեւանք անխնամ
պահպանութեան, լքման: Կը հաւաստուի թէ արժե-
քաւոր հնութիւններ, մանաւաղն գրամագիտական լա-
հաւաքածոյ մը, ունէր ողբացեալ Թանգարանը: